ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/216

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ձեռակերտ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Խ. Միրզոյանի (պետական գրանցման համար՝ 60.110.21685),

«Ձեռակերտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Միրզոյանի (լիազորագիր՝ տրված 03.06.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9971-2022 գրությամբ «Ձեռակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի 25.05.2022թ. թիվ 31-302 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/9971-2022 գրությամբ նախաձեռնել է «Ձեռակերտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ձեռակերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ձեռակերտ» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.06.2022թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան Ձեր 31.05.2022թ. էլեկտրոնային գրությանը, ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի 25.05.2022թ. թիվ 31-302 գրության հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած «Ձեռակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու վերաբերյալ, ներկայացնում եմ իմ դիրքորոշումը.

09.11.2021թ. «Ձեռակերտ» ՍՊԸ-ի և Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի միջև կնքվել է N «ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/10-4» «Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի մասնակի վերանորոգման աշխատանքների» կատարման պայմանագիր: Մեր կողմից, պայմանագրի կնքման օրվանից, սկսվել են շինվերանորոգման աշխատանքները և միաժամանակ բազմիցս դիմել ենք Պատվիրտուին նախագծում և ծավալաթերթում առկա բացթողումների և լրացումների շտկման հարցով, սակայն մինչև վերջերս, համայնքապետարանի անգործության պատճառով, չենք ստացել ոչ հարցի լուծումը, ոչ էլ որևէ պատասխան հարցի մերժման վերաբերյալ: Առաջին անգամ գրավոր դիմել եմ 16.11.2021թ-ին նախագծային կազմակերպությանը, ապա 22.11.2021թ-ին համայնքի ղեկավարին և նախագծային կազմակերպությանը, 27.11.2021թ-ին դիմումս տեղադրել եմ համայնքապետարանի պաշտոնական կայքում, 09.12.2021թ-ին այն թղթային տարբերակով հանձնել եմ համայնքապետարանի ընդունարան: Ամեն անգամ դիմումիս կցել եմ իմ կողմից կատարված հաշվարկները, չափագրությունները և բացահայտված բացթողումները և առաջարկել մեր կազմակերպության կողմից կատարված ավել և/կամ լրացուցից /ծավալաթերթ-նախահաշվով չնախատեսված/ աշխատանքների վճարման համար՝ Համադրման սկզբունքով:

Մեր կողմից աշխատանքները դադարեցված են 2022թ Հունվարից: Իսկ աշխատանքները կատարված են 85%-ով /ներքին աշխատանքները՝ 100%-ով/: Մեր կողմից աշխատանքները կավարտվեին ժամանակին, առանց ժամկետի երկարացման, եթե Պատվիրատուն անգործություն չդրսևորեր ու շինհրապարակ հրավիրեր

նախագծային կազմակերպության ներկայացուցչին իմ կողմից բարձրացված խնդիրներին լուծում տալու համար: Ի դեպ նախագծային կազմակերպությունը չի առարկել իմ դիտողություններին և հայտնել է իր պատրաստակամությունը համագործակցության համար, սակայն նշել է, որ նամակ-նախաձեռնությամբ պետք է դիմի Պատվիրատուն: Իսկ Պատվիրատուն դրսևորել է անգործություն և միաժամանակ իր մոտ անփութության պատճառով առաջացել են ֆինանսական խնդիրներ, կապված կատարված աշխատանքների վճարման հետ՝ 09.11.2021թ – 06.12.2021թ ժամանակահատվածում կատարված աշխատանքների միջանկյալ կատարողական թիվ 1 ակտը ընդունվել է 10.12.2021թ, իսկ գումարը /4 554 115 դրամ –ամբողջ աշխատանքների 48%/ վճարվել է 15.02.2022թ-ին, իսկ 06.12.2021թ – 28.12.2021թ ժամանակահատվածում կատարված աշխատանքների կատարողական թիվ 2 ակտը /3 563 302 դրամ –ամբողջ աշխատանքների 37%/ ընդունվել և գումարը վճարվել է 20.04.2022թ-ին: Իսկ պայմանագրի վերջնաժամկետը համատեղ համաձայնագրով 25.12.2021թ երկարացվել է մեկ ամսով /հետագայում փոխվել է 3 ամսով/ ոչ թե մեր կողմից աշխատանքների ձգձգման պատճառով, այլ Պատվիրատուի կողմից առաջացած ֆինանսական խնդիրների լուծման հարցը ձգձգվելու պատճառով: Այդքանով հանդերձ մենք չենք զլացել վերոնշյալ /ներքին/ աշխատանքները կատարել մինչև 2022թ-ը:

Վերջապես Տեղ համայնքի ղեկավարը հիշել է մեզ և 17.05.2022թ-ին ուղարկել է գրություն, «անկատար» աշխատանքները /15%-գումարային արտահայտությամբ/ ավարտելու պահանջով, վկայակոչելով արտաքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի կառուցում, որը նախագծով և նախահաշվով նախատեսված չէ:

Ես մերժել եմ պահանջը, նշելով, որ ես պարտավոր չեմ և դրա իրավունքը չունեմ, ներքին ջրամատակարարման և ջրահեռացման բաժնից ավելացած խողովակների /կրկնում եմ՝ ներքին և միայն խողովակների/ և հատակներ ու ներքին էլեկտրական լուսավորություն բաժիններից ավելացած որոշ ծավալների չնչին գումարային արժեքների հաշվին կառուցել արտաքին ջրամատակարարման և ջրահեռացման գծեր առանց նախագծի, առանց տեխպայմանների, որը հղի է բազմաթիվ խնդրիներով, անավարտ աշխատանքներն ներառում է նաև շենքի արտաքին սալվածքը, որը նախ հնարավոր է իրականացնել արտաքին ջրամատակարարման և ջրահեռացման գծերի հարցը լուծելուց հետո /ինչ նախակրթարան առանց ջրամատակարարման և ջրահեռացման/ և երկրորդ նախագծով նախատեսված է նոր սալվածք շենքի պարագծով 1,0 մ լայնությամբ /88սմ բետոն և 12սմ եզրաքար/, սակայն տեղում առկա է հին սալվածք 1,2-1,3մ լայնությամբ,

սակայն որոշ տեղեր թեք ռելիեֆի պատճառով ծածկված է հողային և բուսական շերտով, որը գուցէ «չի նկատել» նախագծողը: Նոր սալվածք կառուցելու համար անհրաժեշտ կլինի հնի քանդում /ես բազմիցս պահանջել եմ նախագծալին լուծում/, իսկ քանդումն լրացուցիչ ֆինանսական ծախսեր է, որը նախատեսված չէ ծավալաթերթ-նախահահաշվում:

Իսկ անկատար ծավալները դիտարկում եմ որպես ավելացած ծավալներ, որոնք կարող են դիտարկվել որպես խնայողություններ, կամ օգտագործել մեր կազմակերպության կողմից կատարված և գուցէ կատարվելիք ավել և/կամ լրացուցից /ծավալաթերթ-նախահաշվով չնախատեսված/ աշխատանքների վճարման համար՝ Համադրման սկզբունքով:

Այս ամենին ի պատասխան 20.05.2022թ-ին ստացել եմ ծանուցում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և մեր կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսելու մասին:

23.05.2022թ. Տեղի համայնքապետարանի անգործության հարցով դիմել եմ նաև Սյունիքի մարզպետարան:

Վերոնշյալ փաստերի հաստատման անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ ներկայացնել բոլոր փաստաթղթերի կրկնօրինակները /նախագիծ, նախահաշիվ, չափագրություններ, ավելացող և պակասող ծավալներ, առաջարկներ, համադրման տարբերակներ, նամակներ, գրություններ և այլն/ Ձեր կողմից հրավիրվելիք նիստին»:

«Ձեռակերտ» ՍՊԸ-ի տնօրենը և ներկայացուցիչը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/216 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել են նիստին և պնդել ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.05.2022թ. թիվ 01-302 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի կարիքների համար կազմակերպված «Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի մասնակի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման «ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/10-

4» ծածկագրով մրցույթում «Ձեռակերտ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և «09» նոյեմբերի 2021թ. կնքվել է պայմանագիր: Կապալառուի դիմումի համաձայն «25» դեկտեմբերի 2021թ. կնքվել է համաձայնագիր, որով պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև «25» ապրիլի 2022թ.: Համաձայնագրի 1.1 կետով սահմանված ժամկետը նույնպես ավարտվել է, սակայն աշխատանքների մի մասը մնացել է անավարտ: Առաջարկվել է ողջամիտ ժամկետում (3 օր) վերսկսել աշխատանքները և գրավոր ծանուցել դրանց ընթացքի և ավարտի մասին, սակայն բերվել է մի շարք պատճառաբանություններ և չի ավարտվել շինարարությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 45-րդ կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա) ենթականը՝ դիմում ենք Ձեզ «Ձեռակերտ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Կից ներկայացնում ենք ընթացակարգի վերաբերյալ արձանագրությունները, մասնակցի հայտի փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/216 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/216 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/216 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքապետարանի և «Ձեռակերտ» ՍՊԸ-ի միջև 09.11.2021թ. կնքվել է թիվ «ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/10-4» ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի

մասնակի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրերի վարչական շենքերի առաջին հարկի մասնակի վերանորոգման աշխատանքներ N2	Պայմանագրի կնքման օրվանից	25.12.2021թ.

3. Պատվիրատուն «Ձեռակերտ» ՍՊԸ-ին ուղղված 20.05.2022թ. թիվ 01-296 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին Տեղ համայնքի կարիքների համար կազմակերպված «Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի մասնակի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման «ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/10-4» ծածկագրով մրցույթի մասով Ձեր կազմակերպությունը՝ «Ձեռակերտ» ՍՊԸ-ն, ճանաչվել է ընտրված մասնակից և «09» նոյեմբերի 2021թ. կնքվել է պայմանագիր: Հիմք ընդունելով Ձեր դիմումը, պայմանագրի ժամկետի երկարացման հետ կապված, «25» դեկտեմբերի 2021թ. կնքվել է համաձայնագիր, որով պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև «25» ապրիլի 2022թ., սակայն Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների մի մասը մնացել են անկատար:

Վերը նշված խախտումների շտկման համար ընկերությանը տրվել է ողջամիտ ժամկետ՝ 3 օր, սակայն առկա խնդիրների շտկման ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը Տեղի համայնքապետարանը հարկադրված է 2022թ. մայիսի 20-ից «09» նոյեմբերի 2021թ կնքված պայմանագիրը և դրա անբաժանելի մաս հանդիսացող «25» դեկտեմբերի 2021թ. համաձայնագիրը միակողմանի լուծել: Միաժամանակ հայտնում ենք, որ կապալառուից կգանձվի որակավորման և պայմանագրի ապահովումներ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Ձեր կազմակերպության համապատասխան հիմքերով պարտավորվում ենք ներկայացնել լիազոր մարմին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 20.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9971-2022 գրությունը, ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի 25.05.2022թ. թիվ 01-302 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքապետարանի և «Ձեռակերտ» ՍՊԸ-ի միջև 09.11.2021թ. կնքվել է թիվ «ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/10-4» ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի մասնակի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրերի վարչական շենքերի առաջին հարկի մասնակի վերանորոգման աշխատանքներ N2	Պայմանագրի կնքման օրվանից	25.12.2021թ.

Պատվիրատուն «Ձեռակերտ» ՍՊԸ-ին ուղղված 20.05.2022թ. թիվ 01-296 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին Տեղ համայնքի կարիքների համար կազմակերպված «Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի մասնակի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման «ՍՄՏՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/10-

4» ծածկագրով մրցույթի մասով Ձեր կազմակերպությունը՝ «Ձեռակերտ» ՍՊԸ-ն, ճանաչվել է ընտրված մասնակից և «09» նոյեմբերի 2021թ. կնքվել է պայմանագիր: Հիմք ընդունելով Ձեր դիմումը, պայմանագրի ժամկետի երկարացման հետ կապված, «25» դեկտեմբերի 2021թ. կնքվել է համաձայնագիր, որով պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև «25» ապրիլի 2022թ., սակայն Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների մի մասը մնացել են անկատար:

Վերը նշված խախտումների շտկման համար ընկերությանը տրվել է ողջամիտ ժամկետ՝ 3 օր, սակայն առկա խնդիրների շտկման ուղղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը Տեղի համայնքապետարանը հարկադրված է 2022թ. մայիսի 20-ից «09» նոյեմբերի 2021թ կնքված պայմանագիրը և դրա անբաժանելի մաս հանդիսացող «25» դեկտեմբերի 2021թ. համաձայնագիրը միակողմանի լուծել: Միաժամանակ հայտնում ենք, որ կապալառուից կգանձվի որակավորման և պայմանագրի ապահովումներ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Ձեր կազմակերպության համապատասխան հիմքերով պարտավորվում ենք ներկայացնել լիազոր մարմին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 20.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.05.2022թ. թիվ 01-302 գրությամբ հայտնել է, որ Կապալառուի դիմումի համաձայն «25» դեկտեմբերի 2021թ. կնքվել է համաձայնագիր, որով պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 25.04.2022թ.: Համաձայնագրի 1.1 կետով սահմանված ժամկետը նույնպես ավարտվել է, սակայն աշխատանքների մի մասը մնացել է անավարտ:

Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ Պայմանագրի շրջանակներում կնքված Համաձայնագիրը, որով Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է, ինչպես նաև որևէ փաստաթուղթ, որով հնարավոր կլիներ արձանագրել թե աշխատանքների որ մասն է կատարվել, որ մասը չի կատարվել առկա չեն, որպիսի պայմաններում նաև հնարավոր կլիներ արձանագրել Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը:

Մինչդեռ՝ Կարգի 45-րդ կետը հստակ սահմանում է, որ պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ձեռակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9971-2022 գրությամբ «Ձեռակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**